

ՊԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

РУССКОЕ БОГАТСТВО, մայիս. — Փրանսիական ներկայ մինիստրութեան պարագլուխ Գոմբը, որի հակակղերական գործունէութիւնը ամբողջութեամբ համար կղերականները անաշուղ փորձ արին գիմիւով միլիոններէ հմայքին, — շատ նշանաւոր պետական անձնաւորութիւն դարձաւ հէնց իր վերջին տարիներէ քաղաքական պայքարի շնորհիւ։ Ռուսաց ամսագրի յիշեալ համարում տրուած է Գոմբի կենսագրութիւնը, որից քաղում ենք մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ։

Ժիւստէն-Լուի-Էմիլ Գոմբ ծնունդ է 1835 թ. Բոկիբըրուն փոքրիկ քաղաքում, աղքատ բանուորական մի ընտանիքում։ Ծնողները աշխատել են տալ Էմիլին ըստ կարելոյն լաւ կրթութիւն։ Նշաւոր ծնողներին աւելի մատչելի էր հոգեւոր դպրանոցներից (petite séminaire) մերձաւորագոյնը։ Այդ դպրանոցները տանում են բնականաբար հոգեւորականութեան ղեկավարութեամբ։ Ցետոյ նա իր ուսումը շարունակել է Մոնպելիէի համալսարանի լեզուաբանական ֆակուլտետում։ Նրա կանգնողատական շարագրութեան թիւիքը սիւրյառտիկական բնաւորութիւն ունէին — «Մուրթ Թոմա Ալփինատի հոգեբանութիւնը», ինչպէս և գոկտորականը — «Եկեղեցու հայրերի գրականութեան մասին»։ Նիւթականի հարցը սոսկում է նրան ուսանել բժշկականութիւն, և 1867 թուականից նա պարագլուխ է բժշկականութեան Գոնս քաղաքում, ուր ամուսնանում է, ընտանիքի հայր դառնում և կամայական գիւրք ու ազդեցութիւն ձեռք բերում։ Գամայ-կամայ կերպարանափոխում է

և նրա աշխարհայեցողութիւնը՝ դառնալով հակակաթոլիկական և հակակղերական։ Այդ փոքրիկ քաղաքում նա մասնակցում է տեղական մամուլում հանրապետական ոգով գրուած յօդուածներով։ Նրա ազդեցութիւնը այնքան աճում է որ 1879 թուականին ընտրուում է տեղական դեպարտամենտի ինքնավարական խորհրդի անդամ և ապա 1885 թուականին ծերակոյտի անդամ։ Այդտեղ նա միշտ առանձին ուշադրութիւն է դարձնում ժողովրդի լուսաւորութեան գործի հետ կապուած հարցերի վրայ՝ բնական կրթութեան շտապով հանդիսանալով։ 1895 թուականին նա Բուրժուաի կարճատե մինիստրութեան մէջ ժողովրդի լուսաւորութեան մինիստրի պորտֆոլն ունէր։ Վաղեկ Բուսոսի հրաժարականից յետոյ նոր մինիստրութիւն կազմակերպելը, ինչպէս յայտնի է, յանձնուեց Գոմբին (1902 թ. յունիսի 7)։ Դեռ երբէք նացիոնալիստները և կղերականները Փրանսիայում այնպիսի ուժգին հարդամներ չէին ստացել, ինչպէս Գոմբից։ Նա սկսում է մի սիստեմատիկ և հաստատակամ մտքառում կղերականութեան դէմ։ Նա իսկական մարանչողի ոգեւորութեամբ է մղում կռուի առդարէդ. թշնամիների կատաղութիւնը միայն աւելացնում է նրա մէջ կռուելու էներգիան։ «Ես սիրում եմ պայքարը, հնոգալով նրա մասին, թէ ինչ է նա պատրաստում ինձ համար... Եւ ես դեռ առաջուց սիրում եմ այն կռիւը, որ պատրաստում է վաղը, շաշխատելով մինչև անգամ նախադուշակիլ՝ արդեօք ես կը ստանամ նրանից այլ բան բացի հա-

ընկածներէն: Մարդիկ—ոչինչ են. դա-
դափարները ամեն ինչը:

Կոմբը անփողատէր է, պարզ և
միշտ լաւ տրամադրութեան մէջ: Նրա
անկաշառութիւնը իմանալով թըշ-
նամիները ցանկացան ստուեր զցել
նրա վրայ, ամբաստանելով կաշառա-
կերութեան մէջ նրա որդուն, Էդգար
Կոմբին: Աւեր Կոմբը այդ զրպարտու-
թիւնները մերկացնելու համար ինքը
պալատում բացձակատ կուտի կանչեց
մութ անկիւններում փսփոսացող ին-
տրիգաններին: Եւ այդտեղ էլ խտարի և
ստորութեան դաւաճները ամօթապարտ
մնացին:

— «Հանդէս Ամսօրեայ», մայիս.
— Տպուած է հայերէնագէտ պրոֆ.
դոկտ. Հովհեր Պետերսընի «էին հա-
յերէն լեզուի շնորհ» գրուածքը, որ
բացի մասնագիտական հետաքրքրու-
թիւնից նշանաւոր է և այն կողմից որ
հեղինակը հայերէն լեզուն ինքնաշ-
խատութեամբ և կարճ ժամանակամի-
ջոցում է ձեռք բերել: Կոպենհագենի հա-
մալսարանի համեմատական լեզուա-
գիտութեան երկտասարդ պրոֆեսսոր
Պետերսընը առաջին օտարազգի հայե-
րէնագէտն է, որ արեւմտեան հայոց

բարբառով յօդուած է գրում:

«Արեւելեան Մամուլ», մայիս,
թիւ 22.—Այցելելով Պոլսոյ զլիաւոր
վարժարանները՝ Վադինակ մի հետա-
քրքրական յօդուած է գետեղել Զմիւռ-
նիայի հանդիսի այդ համարում. Բա-
ւական տխուր եղբակացութիւններ է
անում յօդուածագիրը. «Մեր բոլոր
թաղային վարժարանները միօրինակ,
աննշան նախակրթարաններ են հիմա,
ուսկից ելնող չըջանաւորոնները բանի
մը օգտակար չեն կրնար ըլլալ իրենց
ստացած կցկտուր, մուրացածոյ ու-
սումներով: Միթէ ամեն ծնող կարող
է իր զաւակը քանի մը տարիներ ալ
Գենտրոնականը՝ դրկել,—մեր միակ
թաղային բարձրագոյն նախակրթա-
րանը:—Ինչո՞ւ համար յարակից և մեր-
ձակայ թաղերը միանալով, բարձրա-
գոյն նախակրթարան մը չպահեն, ի՞նչ
դժուարութիւն կայ որ Սկիւտարի ե-
րեք թաղերը կամ Գումգափուի յարա-
կից չորս թաղերը կամ Սամաթիոյ ե-
րեք թաղերը իրենց զպրոցական ել-
մրտացոյցները չմիացնեն, կրթական
աւելի մեծ գործունէութիւն մը յա-
ռաջ բերելու համար: Իրաւացի նը-
կատողութիւն: